ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 մարտի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

39
(2705)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը անակնկալ հրաժարական ներկայացրեց: Երեւանում սպասվում են ավագանու նոր ընտրություններ. երբ՝դեռ պարզ չէ: Կլինի արտահերթ, թե հերթական՝ էլի պարզ չէ: ՔՊ խմբակցությունը կարող է ավագանիներից մեկին ընտրել քաղաքապետ մինչեւ հոկտեմբերին կայանալիք ընտրություններ:

Ովքե՞ր են այս պահի դրությամբ հայտ ներկայացրել՝ իբրեւ 1-ին համար մասնակցելու Երեւանի ավագանու ընտրություններին. իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածուն Տիգրան Ավինյանն է, որը թեեւ ի պաշտոնե հիմա քաղաքապետի տեղակալ է, բայց իրեն արդեն իսկ որպես քաղաքապետ է «զգում»:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը քաղաքապետի պաշտոնում առաջադրելու է Դավիթ Խաժակյանի թեկնածությունը, որը, ի դեպ, մեզ հետ զրույցում չէր բացառել ընտրություններին ՔՊ-ի հետ դաշինքով մասնակցության հավանականությունը:

«Միացյալ Հայաստան» կուսակցության նախագահ Երվանդ Թարվերդյանը եւս առաջադրելու է իր թեկնածությունը, իսկ «Ապրելու երկիր» կուսակցության քաղաքապետի թեկնածուն էլ Մանե Թանդիլյանն է:

Տիգրան Արզաքանցյանի «Ուժը Հայրենյաց» կուսակցության թեկնածուն վերջինիս կինն է՝ Նատալյա Ռոտենբերգը, եթե օրենքով իրավունք ունենա առաջադրվելու:

Տիգրան Խզմալյանի Հայաստանի եվրոպական կուսակցության թեկնածուն է երգիչ, երգահան Ռուբեն Հախվերդյանը:

«Հայրենիք» կուսակցությունն էլ չի բացառել, որ Արթուր Վանեցյանը գուցե առաջադրվի քաղաքապետի պաշտոնում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ավագանու ընտրություններին պատրաստվում է առաջադրվել նաեւ Երեւանի Կենտրոն վարչական շրջանի նախկին ղեկավար Վիկտոր Մնացականյանը, որն ունի մի բրենդ՝ սիրված երեւանցի:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության քաղաքապետի թեկնածուն հավանաբար կլինի Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանը. դեռ քննարկում են:

Մեր տեղեկություններով՝ ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն դեռ մասնակցության մասով վերջնական որոշում չունեն, քանի որ համապատասխան թեկնածու չունեն, փնտրում են:

Ահա այս թեկնածուներից երեւանցին աշնանը պետք է ընտրի քաղաքապետ, որը պետք է ղեկավարի մայրաքաղաքը, բարեփոխումներ անի Երեւանում, մաքրի աղբից՝դարձնելով առավել հյուրընկալ եւ մրցունակ քաղաք:

ԱԺ ՔՊ խմբակցությունը երկուշաբթի երեկոյան ֆրակցիայի նիստ կանի: Ինչպես հայտնի է, հաջորդ շաբաթ մեկնարկում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանը: ԱԺ խորհուրդը երկուշաբթի՝ ժամը 16.00-ին, նիստ կանի, որի ժամանակ էլ կհաստատվի գալիք նստաշրջանի օրակարգը: ԱԺ խորհրդի նիստից անմիջապես հետո ՔՊ-ն ֆրակցիայի նիստ կանի նույն դահլիճում, որպեսզի, նստաշրջանի մեկնարկին ընդառաջ, «դերերի բաշխում» անի: ՔՊ-ականները մանրամասնորեն պատրաստվելու են գալիք նստաշրջանին, քանի որ, ինչպես հայտնել ենք, հաջորդ շաբաթ խորհրդարան են գալու նաեւ Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները՝ներկայացնելու կառավարության ծրագրի կատարողականը: ՔՊ-ականները ֆրակցիայի նիստին կորոշեն, թե որ նախագծին ինչպես են քվեարկելու, ով ինչ ելույթներ է ունենալու: Ընդդիմադիր երկու ֆրակցիաները նույնպես մասնակցելու են նիստերի, ուստի մտադիր են լավ պատրաստվել գալիք նստաշրջանին, որպեսզի «հակահարված» տան ընդդիմադիրներին, հատկապես՝ Փաշինյանի ներկայությամբ:

Ինչպես եւ սպասվում էր, քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը երեկ երեկոյան հրաժարական տվեց: Իր հեռանալու մասին հայտարարությունը նա արեց Երեւանի քաղաքապետարանում հրավիրած գործակարգավարական նիստի ընթացքում՝ հավելելով, որ շարունակելու է մնալ քաղաքական թիմի անդամ: Ակնհայտ էր, որ հրաժարականի մասին հայտարարելիս Սարգսյանը բավականին հուզված էր, խոսելու ընթացքում կուլ էր տալիս տառերը, շնչակտուր էր խոսում: «Ժողովուրդ» օրաթերթի հավաստի տեղեկություններով՝ Հրաչյա Սարգսյանի այս որոշումը անակնկալ է եղել ինչպես Նիկոլ Փաշինյանի, այնպես էլ ողջ ՔՊ-ի համար: Սարգսյանը տեւական ժամանակ կապի դուրս չի եկել ավագանու «Իմ քայլը» ֆրակցիայի իր թիմակիցների հետ, նրանց անորոշ վիճակի մեջ է դրել: Երեկ, երբ մամուլը գրեց հրաժարականի մասին, նա անհետացել էր... Տեղեկացանք, որ արդեն նախկին քաղաքապետը մի քանի անգամ ակնարկել է իր հեռանալու մտադրության մասին, սակայն վերջնական որոշում կայացրել է այս շաբաթ, բայց թիմակիցներին հստակ ոչինչ չի ասել: Սարգսյանի որոշումն անակնկալ է եղել անգամ Փաշինյանի համար, որն ընդամենը օրեր առաջ իր ասուլիսում, լրագրողների հարցին ի պատասխան, համոզմունք հայտնեց, որ քաղաքապետը հրաժարական չի տալու: Ըստ էության, Փաշինյանի սրտով էլ չի եղել Հրաչյա Սարգսյանի հեռանալը, քանի որ պաշտոնավարման ողջ ընթացքում հլու-հնազանդ ենթարկվել է իրենց բոլոր որոշումներին: Մեր տեղեկություններով՝ հենց ՔՊ թեկնածու Տիգրանն Ավինյանն է այնպիսի իրավիճակ ստեղծել քաղաքապետարանում, որպեսզի Սարգսյանն ինքնակամ հեռանա, քանի որ ինքն էլ գիտակցել է, որ, ավագանու ընտրություններին ընդառաջ, Հրաչյա Սարգսյանի վարկանիշը բարձրանում էր: Այսպիսով, քաղաքապետի հրաժարականից հետո ՔՊ-ն երկու ճանապարհ ունի՝ կամ պետք է գնա ավագանու արտահերթ ընտրությունների, կամ էլ ավագանու անդամներից մեկին ժամանակավոր պաշտոնակատար ընտրի մինչեւ ավագանու հերթական ընտրություններ:

⇨ էջ 3

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի եւ ՀՀ դատախազության ջրերը մի առվով չեն հոսում, եւ իրավապահ համակարգի երկու կառույցների ներքին գզվռտոցը մի օր կպայթի: Իրավիճակը երկու համակարգերի միջեւ առավել լարված է հատկապես Երեւան քաղաքում: Մասնավորապես, Քննչական կոմիտեի քննիչները շատ դեպքերում համաձայն չեն լինում դատախազների հանձնարարականների հետ եւ առարկում են նրանց որոշումների դեմ, նրանց միջեւ բացակայում է կենդանի շփումը: Ամենաուշագրավն այն է, որ քննիչների եւ դատախազների առարկությունները միայն հայհոյանքներ են ու խիստ վիրավորանքներ միմյանց հասցեին: Դատախազների եւ քննիչների այս հակասությունը ազդում է վարույթների քննությունների ընթացքի վրա, խախտվում են վարույթների մասնավոր մասնակիցների իրավունքները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավիճակի մասով, չի բացառվում, փաստաբանները առաջիկայում հանդես գան հայտարարությամբ, որ այս երկու մարմինների հակասությունների արդյունքում տուժում են քաղաքացիները, ուստի ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ու ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը կոնկրետ քայլեր պետք է իրականացնեն, այլապես մեծ բունտ է հասունանում:



ՄԱՐՏԱԿԱՆ

ՊԵՏՔ Է ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ԿՌՎԵԼ

Արցախում ստեղծված ճգնաժամը գնալով խորանում է: Ադրբեջանն արդեն 3 ամսից ավելի է՝ բնաջնջողական կեղծ դատճառաբանություններով փակել է Արցախը Հայաստանին եւ արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը:



Ադրբեջանը հրաժարվում է բանակցությունների դուրս գալ ո՛չ միայն Հայաստանի, այլեւ Ռուսաստանի հետ, ավելին՝ հրաժարվում է կատարել անգամ Հաագայի միջազգային դատարանի վճիռը, որով պարտավորվել էր բացել Արցախի կյանքի ճանապարհը:

Լաչինի միջանցքի շրջափակումից հետո այստեղ մնացած արցախցիները ժամանակավոր բնակություն են հաստատել Հայաստանի տարբեր հատվածներում, այդ թվում՝ Գորիսում:

Հայաստանի եւ Արցախի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանյանի հետ:

Վերջինս էլ մեզ հետ զրույցում նշեց, որ Լաչինի խնդրի լուծումը խաղաղ տարբերակով չի տեսնում: Առուշանյանի խոսքով՝ պետք է մինչեւ վերջ կռվենք՝ հանուն Հայաստանի ու Արցախի:

Գորիսի քաղաքապետը հավելեց նաեւ, որ պարբերաբար այցելում է ճանապարհի փակման արդյունքում Գորիսում մնացած արցախցիների հետ, որոնց միակ ցանկությունը իրենց տուն՝Արցախ վերադառնալն է:

-Պարոն Առուշանյան, արդեն 3 ամսից ավելի է՝ Լաչինի միջանցքը փակ է, Ադրբեջանը հրաժարվում է բացել Արցախը Հայաստանին ու արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը, հարյուրավոր արցախցիներ մնացել են այստեղ՝ իրենց ընտանիքներից հեռու: Ի՞նչ ելքեր եք տեսնում այս իրավիճակից, ըստ Ձեզ՝ թշնամին ե՞րբ կբացի ճանապարհը:

-Չեմ կարող հստակ ասել, թե երբ կլուծվի Լաչինի շրջափակման խնդիրը, բայց կարող եմ հաստատ ասել, որ բոլորս պատրաստակամ ենք, մեր կյանքի գնով պատրաստ ենք պաշտպանել մեր հայրենիքը: Հիմա որ թշնամին գա մեզ սպանելու, հո ձեռքներս չե՞նք պարզելու, ասենք՝ դե սպանի. պարզ է, որ պետք է մինչեւ վերջ կռվենք: Ճնապարհը փակել են, մեր ժողովրդին շրջափակել են, սա փաստ է, ես խնդրի լուծումը խաղաղ ճանապարհով չեմ տեսնում:

-Պարոն Առուշանյան, հանիպու՞մ եք ճանապարհի շրջափակման հետեւանքով Գորիսում մնացած արցախցիներին, ի՞նչ են պատմում նրանք:

-Իհարկե, պարբերաբար հանդիպում եմ ճանապարհի փակման արդյունքում այստեղ մնացած արցախցիների հետ. նրանք բոլորը մարտական են, բոլորն էլ ցանկանում են հետ գնալ իրենց տները եւ այնտեղ շարունակեն ապրել: Բոլորի ցանկությունը սա է:

-Վերջին օրերին թշնամին պարբերաբար սադրանքների է դիմում ոչ միայն Արցախի, այլ նաեւ Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ. ի՞նչ իրավիճակ է այս օրերին Սյունիքում.

-Սյունիքում կրակոցներ չկան, հարաբերականորեն հանգիստ վիճակ է: Մենք մարտական ենք տրամադրված, բոլորս մեր տեղում ենք, ցանկացած խնդրի դեպքում պատրաստ ենք ոտքի կանգնել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՀԱՋԱՆԳԵԼ Է

ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Խորհրդարանում հյուրընկալել եմ Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Ջոն Գալագերի պատվիրակությանը: Դեսպանին շնորհակալություն եմ հայտնել Միացյալ Թագավորության խորհրդարանի ներկայացուցիչների կողմից ադրբեջանական գործողությունները հասցեական քննադատելու, Ադրբեջանի կողմից հայերի էթնիկ զտման, ցեղասպանության շարունակականության մասին հիշեցնելու համար:

Միաժամանակ ահազանգել եմ, որ նկատելի են ադրբեջանական զինուժի եւ ծանր տեխնիկայի կուտակումներ Հայաստանի եւ Արցախի սահմաններին, պատերազմի լրջագույն վտանգ եւ սպառնալիք կա: Բացի այդ, Ադրբեջանը, կասկածի տակ դնելով ՄԱԿ-ի հիմնական դատական մարմնի հեղինակությունը, չի կատարում Արդարադատության միջազգային դատարանի պահանջը եւ շարունակում է Բերձորի միջանցքը փակ պահել, որի հետեւանքով Արցախում հումանիտար իրավիճակը շարունակում է մնալ օրհասական:

«Իսկապես խաղաղության գինը շատ լավ եմ պատկերացնում: Այն տարածքները, որտեղ անցկացրել եմ իմ մանկությունը, հիմա օկուպացված են թշնամու կողմից, Արցախի 120000 շրջափակված մեր հայրենակիցները գտնվում են հումանիտար աղետի ծանր պայմաններում: Ինչքան մենք խոսում ենք խաղաղությունից, այնքան ստանում ենք ագրեսիա Ադրբեջանի կողմից»:

Ի պատասխան՝ դեսպանը նշել է, որ հասկանում է իրավիճակի բարդությունը եւ հումանիտար խնդիրների լրջությունը, եւ հայտնել, որ Միացյալ Թագավորությունը սատարում է հակամարտության կայուն եւ խաղաղ կարգավորման միջազգային ջանքերին, շեշտել է կառուցողական երկխոսության, վստահության մեխանիզմների կարեւորությունը: Դեսպանը հավելել է, որ Միացյալ Թագավորությունն Ադրբեջանի հետ զրույցներում նշել է, որ Լաչինի միջանցքը պետք է բացվի: Նա նաեւ հույս է հայտնել, որ երկխոսության արդյունքում իրավիճակում իրական փոփոխություն կլինի: Պարոն Գալագերը կարեւորել է հանձնաժողովի գործունեությունը Միացյալ Թագավորության համար առանցքային նշանակություն ունեցող ոլորտներում, այդ թվում՝ կանանց իրավունքներին առնչվող հարցերի տեսանկյունից:

Քննարկել ենք նաեւ Հայաստանում ժողովրդավարությանն առնչվող հարցեր»:

ԱՀԱՋԱՆԳ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթն ահազանգ էր ստացել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնում տիրող անառողջ մթնոլորտի մասին: Մասնավորապես, մեզ ահազանգած քաղաքացիները նշել էին, թե ղեկավարի տեղակալ Սուրեն Մինասյանը բոլոր հանդիպումներին ներկայանում է օգնականի հետ՝ որպես վկայի: Այդ նույն տեղեկությունների համաձայն՝ նրա օգնականը, որն իգական սեռի ներկայացուցիչ է, աշխատանքի է գալիս ու գնում այն ժամին, երբ իրեն է հարմար, աշխատում է շատ անփույթ, դիմումները մակագրում է սխալ: Ավելին՝նույն տեղեկությունների համաձայն՝ վերջերս նա արձակուրդ էր գնացել երկրից դուրս՝ առանց արձակուրդ ձեւակերպելու, քանի որ չի լրացել աշխատանքի ընդունվելու 6 ամիսը: Նշվում էր, թե տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանը տեղյակ է այդ ամենի մասին, ցանկացել է աշխատանքից հեռացնել Սուրեն Մինասյանի օգնականին, սակայն վերջինս ընդդիմացել է: Եվ, ահա, այս տեղեկությունների առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել տեսչական մարմին: Ի պատասխան՝ տեսչական մարմնի ղեկավարն իր տեղակալի կողմից օգնականին հանդիպումների տանելու հարցին խուսափողական պատասխան է տվել՝ նշելով. «Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի իրավունքներն ու պարտականությունները հստակորեն սահմանված են Տեսչական մարմնի Կանոնադրությամբ»: Միեւնույն ժամանակ, նրա խոսքով, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի օգնական Հ. Արզումանյանին տրամադրվել է 5 օր չվճարվող արձակուրդ՝ սկսած 2023 թ.փետրվարի 13-17-ը ներառյալ՝հաշվի առնելով վերջինիս 2023թ. հունվարի 24-ի դիմումը: Նա նաեւ հավելել է, թե իր կողմից իր տեղակալի օգնականին աշխատանքից ազատելու հարց չի քննարկել:

ՊԵՏՔ Է ԹԵԹԵՎԱՑՆԵԼ

Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանն երեկ՝ մարտի 17-ին, խորհրդակցություն է անցկացրել Սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարի ու նախարարության ոլորտային պատասխանատուների մասնակցությամբ: Գուրգեն Ներսիսյանը նշել է, որ շրջափակման պայմաններում սպառած գազի եւ էլեկտրաէներգիայի դիմաց վճարները սոցիալապես անապահով բնակչության համար ծանր բեռ են, եւ Կառավարությունը, հատկապես՝ ստեղծված իրավիճակում, համարժեք քայլեր կատարելու պատասխանատվություն պիտի ստանձնի: «Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի շրջափակման հետեւանքով մեր քաղաքացիները կորցրել են աշխատանքն ու հայտվել սոցիալական ծանր վիճակում: Անհրաժեշտ է մշակել աջակցության այնպիսի համակարգ, որը թույլ կտա որոշակի աջակցություն ցուցաբերել աշխատանքը կորցրած կամ բավարար եկամուտ չունեցող ընտանիքներին: Պետք է մշակել այնպիսի մեխանիզմ, որը կապահովի աջակցության արդարությունն ու թափանցիկությունը, հավասարությունը, կունենա խիստ նպատակային բնույթ եւ իրապես կուղղվի նրանց, ովքեր ունեն դրա կարիքը»,- ասել է Գուրգեն Ներսիսյանը: Պետնախարարը շեշտել է նաեւ, որ վերջին շրջանում շատ դիմումներ է ստացել քաղաքացիներից այդ թեմայով, ինչը վկայում է խնդրի առկայության մասին: Գուրգեն Ներսիսյանը նշել է, որ անհրաժեշտ է մտածել աջակցության մասին, բայց դրանից պետք է օգտվեն միայն իրականում դրա կարիքը ունեցողները:

ԲԱՆԱԿՑՈՂԸ ՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ

«Բանակցություններին այլընտրանք չկա. հաջորդ ճանապարհը պատերազմն է»,- երեկ՝ մարտի 17-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը:

«Բայց բանակցողը պետք է փոխվի, որովհետեւ արդեն 2 տարի է անցել պատերազմից, եւ բանակցողը մինչեւ հիմա չի հասկացել, որ ինչքան մենք զիջում ենք, այնքան Ադրբեջանի ախորժակը բացվում է: Դուք կհիշեք, որ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ, իր որոշմամբ, մեր զորքերը Սյունիքից հետ են քաշվել պատերազմից հետո, որպեսզի հնարավոր ռիսկերը կանխի եւ կարողանա կանխարգելել հետագա պատերազմը: Մենք դրանից հետո ստացանք նորից պատերազմ, ստացանք Սյունիքում ագրեսիա, հողեր վերցրեցին: Մենք ունեցանք զիջումներ տարբեր հատվածներում, նաեւ բանակցային դիրքերի զիջումներ, նաեւ Արցախի հարցում նշաձողի իջեցման պատրաստակամություն, նաեւ Պրահայում ադրբեջանամետ դիրքորոշման արտահայտում: Այս բոլոր զիջումները Նիկոլ Փաշինյանն է իրականացրել: Պետք էր ի սկզբանե հասկանալ՝ մեր թշնամին ով է, մի քիչ ուսումնասիրել, նոր գնալ բանակցությունների զրոյական կետից: Պետք է բանակցողը փոխվի, որ կարողանա Հայաստանի ազգային շահն առաջ տանել»,-ասաց նա:

ՀԱՅՏՆԻ Է ՆՇԱՆԱԿՄԱՆ ՕՐԸ

Սիսիան եւ Անի համայնքների ավագանու արտահերթ ընտրություններում գրանցված կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները ինքնաբացարկի դիմում չեն ներկայացրել: Ինքնաբացարկի դիմում ներկայացնելու վերջնաժամկետը մարտի 16-ն էր: Այսպիսով, Շիրակի մարզի Անի համայնքում առաջադրված են «Ազգ-համայնք» դաշինքը (կազմում՝ Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն» կուսակցությունը եւ Ռեֆորմիստների կուսակցությունը), «Իմ հզոր համայնք», «Հայկական երազանք» եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները: Սյունիքի մարզի Սիսիան համայնքում առաջադրված են Հայաստանի հանրապետական, «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները, ինչպես նաեւ ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուների գույքի ու եկամուտների մասին հայտարարագրերը հրապարակված են ԿԸՀ պաշտոնական կայքում՝ Elections.am: Նախընտրական քարոզարշավն ավարտվում է մարտի 24-ին: Ընտրությունները նշանակված են մարտի 26-ին:

ԿԱՐԳ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հրաժարական տվեց: Այս մասին նա հայտարարեց արտահերթ գործակարգավարական նիստում:

«Հիմա, երբ որ ավագանու ընտրությունները մոտ են, ու կառավարության ու քաղաքապետարանի համագործակցությունը լավ է, ես ուզում եմ հայտնել իմ հրաժարականի մասին. շարունակելու եմ լինել քաղաքական թիմի հետ», -ասել է Սարգսյանը:

38-ամյա Հրաչյա Սարգսյանը պաշտոնավարում է ավելի քան մեկ տարի: Նա քաղաքապետ դարձավ Հայկ Մարությանի պաշտոնանկությունից հետո: Մարությանին իշխող թիմը անվստահություն հայտնեց, քանի որ պատերազմին հաջորդած խորհրդարանական ընտրություններում նա չաջակցեց Նիկոլ Փաշինյանին:

Երեւանի արդեն նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին փոխարինելու է քաղաքապետի առաջին տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը: Քաղաքապետի պարտականությունները դրվում են քաղաքապետի առաջին տեղակալի վրա, մինչեւ ավագանին իր կազմից կընտրի նոր քաղաքապետ:

Իսկ ինչպե՞ս է ընտրվում նոր քաղաքապետը. Երեւան քաղաքում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածը սահմանում է, թե ինչ է տեղի ունենում քաղաքապետի հրաժարականի դեպքում:

«Հոդված 46. Քաղաքապետի արտահերթ ընտրությունները

1. Քաղաքապետի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ ավագանու սահմանած ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում, անցկացվում են քաղաքապետի արտահերթ ընտրություններ՝ քաղաքապետի ընտրությունների համար սահմանված կարգով:

2. Արտահերթ ընտրությունների ժամանակ քաղաքապետի թեկնածուներ առաջադրելու իրավունքը պատկանում է ավագանու խմբակցություններին:

3. Արտահերթ ընտրություններն անցկացվում են սույն օրենքի 44-րդ հոդվածի 4-6-րդ մասերով սահմանված կարգով»:

Իսկ հոդված 44-ի 4-6-րդ մասերն ասում են.

«4. Քվեարկությունն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով, որում ընդգրկվում են առաջադրված բոլոր թեկնածուները: Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

5. Եթե առաջադրվել է մեկից ավելի թեկնածու, ապա քաղաքապետ է ընտրվում այն թեկնածուն, որը ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Եթե առաջադրված թեկնածուներից որեւէ մեկը չի ստանում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, ապա առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների միջեւ անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Եթե հավասար ձայների պատճառով հնարավոր չէ պարզել առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա երկրորդ փուլին մասնակցում են նաեւ հավասար ձայներ ստացած մյուս թեկնածուները:

Երկրորդ փուլում քաղաքապետ է ընտրվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է լրացուցիչ քվեարկություն՝ քվեաթերթիկում ընդգրկելով միայն հավասար ձայներ ստացած անձանց: Լրացուցիչ քվեարկության արդյունքով ձայների հավասարության դեպքում առավելությունը տրվում է տարիքով ավագին:

Քվեարկության երկրորդ փուլն ու լրացուցիչ քվեարկությունն անցկացվում են անմիջապես հիմնական քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո:

6. Եթե առաջադրվել է մեկ թեկնածու, ապա վերջինս ընտրվում է քաղաքապետ, եթե նրա օգտին կողմ քվեարկած ձայները ավելի են դեմ քվեարկած ձայների թվից եւ ավելի են ավագանու անդամների ընդհանուր թվի 40 տոկոսից»:

Հավելենք, որ աշխատանքից ազատման դիմում է ներկայացրել Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Սեյրան Մեջլումյանը: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում հայտնել է Երեւանի քաղաքապետարանի լրատվության վարչության պետ Լեւոն Սարդարյանը: «Հայտնում եմ, որ քիչ առաջ արտահերթ գործակարգավարական խորհրդակցության ընթացքում Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտարարեց հրաժարական ներկայացնելու մասին: Միաժամանակ, տեղեկացնում եմ նաեւ, որ աշխատանքից ազատման դիմում է ներկայացրել Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Սեյրան Մեջլումյանը»,- գրել է նա:

Ն.Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍՊԱՅԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ին քիչ առաջ հայտնի դարձավ, որ նախաքննական մարմինը պատրաստվում է կալանքի տանել Ազատ գյուղի ողբերգական հրդեհի դեպքով սպային՝ Եղիշե Հակոբյանին, որը բենզինը լցրել էր եւ վառարանը վառել, ինչի հետեւանքով կացարանում հրդեհ էր բռնկվել: Նշենք, որ սպան այս պահին գտնվում է «Մուրացան» զինվորական հոսպիտալում:

Հիշեցնենք, որ կացարանի հրդեհից մահացել էին 15 զինծառայողներ:

ԴՌՆՓԱԿ ՆԻՍՏ

Արցախի խորհրդարանում երեկ՝ մարտի 17-ին, Պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ «Ռազմական դրության պայմաններում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների խնդիրները եւ գործողությունները քաղաքացիական պաշտպանության բնագավառում» թեմայով դռնփակ քննարկում է կազմակերպվել, որին ներկա էր նաեւ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը:

Արցախի ԱԺ-ից հայտնում են, որ քննարկմանը հրավիրված էին ԱՀ պետնախարար Գուրգեն Ներսիսյանը, ՆԳՆ ԱԻՊԾ տնօրեն, գնդապետ Մեխակ Արզումանյանը, ԱՀ ՊԲ հրամանատարի 1-ին տեղակալ- շտաբի պետ, գնդապետ Սամվել Գրիգորյանը, ԱՀ նախագահի խորհրդական Գրիգորի Սահակյանը, ԱՀ հանրային խորհրդի նախագահ Արմեն Գեւորգյանը:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ վարչապետի աշխատակազմից տեղեկացնում են, որ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, Դավիթ Գրիգորյանը նշանակվել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Դավիթ Գրիգորյանին նշանակել քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ ազատելով քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնից»,- նշվում է որոշման մեջ:

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՁԵԿՈՒՅԵԼ ԵՆ

Հաշվետու տարում Ադրբեջանի պաշտպանության նախարարության ենթագերատեսչական միավորումներում եւ ձեռնարկություններում արտադրվել եւ ուժային կառույցներին է հանձնվել պաշտպանական նշանակության 160 անուն արտադրանք: Դա արտացոլվել է Ադրբեջանի կառավարության 2022թ. գործունեության հաշվետվությունում:

Փաստաթղթում նշվել է, որ 2022թ. կատարվել են 47 թեմաների վերաբերյալ փորձնակոնստրուկտորական աշխատանքներ, նախարարության ենթակա ձեռնարկությունները լիովին ավարտել են պաշտպանական նշանակության 5 անուն արտադրանքի ստեղծման աշխատանքները:

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է

ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ

Դատախազը 2023 թվականի մարտի 15-ին ֆրեական հեռաոնդում հարուցելու մասին նոր որոշում է կայացրել 1997-2011 թվականներին Պաշտպանության նախարարությունում ծառայած, 2011-2018 թվականներին Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 4-րդ վարչության պետի տեղակալի եւ 5-րդ բաժնի պետի պաշտոնը զբաղեցրած Ա.Հ.-ի (Արշակ Հակոբյան) նկատմամբ:

Այս մասին հայտնում են ՀՀ գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնից՝նշելով, որ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով հիմնավորվել է, որ Ա.Հ.-ն, 1994-2018 թվականների ընթացքում հանդիսանալով պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, օրենքով նախատեսված արգելքին հակառակ՝ ապօրինի մասնակցել է ձեռնարկատիրական գործունեությանը, ինչպես նաեւ զբաղվել է կոռուպցիոն այլ գործունեությամբ, որի արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված գույքն ու եկամուտները լվանալու, օրինական քաղաքացիական շրջանառության մեջ դնելու նպատակով թաքցրել, խեղաթյուրել է ձեռք բերած գույքերի ու վճարած գումարների իրական բնույթը, հանցավոր ծագումը եւ պատկանելիությունը՝ դրանց հաղորդելով օրինական տեսք:

Մասնավորապես, 2008-2010 թվականների ընթացքում Ա.Հ.-ն ձեռք է բերել «Ուրբանիզմ-Պետրոլ» ՍՊ ընկերության 100% տոկոս բաժնեմասը եւ այն իրավաբանորեն հաշվառելով նախկինում որեւէ բնագավառում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած կնոջ եւ այդ պահին անչափահաս՝ 9-ամյա որդու անվամբ՝ նրանց միջոցով փաստացի մասնակցել է ընկերության կառավարմանը:

Այդ գործունեության, ինչպես նաեւ քրեական վարույթով դեռեւս չպարզված հանգամանքներում այլ ենթադրյալ անօրինական գործունեության արդյունքում (Ա.Հ.-ի եւ նրա ընտանիքի անդամների ունեցած օրինական եկամուտների ու գույքային դրության միջեւ կա ակնհայտ անհամապատասխանություն) ստացված գումարների իրական բնույթը եւ հանցավոր ծագումը թաքցնելու ու խեղաթյուրելու նպատակով Ա.Հ.-ն 2011 թվականին ձեռք է բերել Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասում գտնվող, 75 մլն դրամ արժողությամբ անշարժ գույքը (գրանցվել է կնոջ սեփականության իրավունքը), 2012 թվականին 120 մլն դրամով՝ Երեւան քաղաքի Ամիրյան փողոցում գտնվող անշարժ գույքերը (գրանցվել է կնոջ սեփականության իրավունքը), 2013 թվականին 204 մլն 250 հազար դրամով՝Երեւան քաղաքի Հանրապետության փողոցում գտնվող անշարժ գույքը (գրանցվել է իր եւ կնոջ սեփականության իրավունքը), իսկ 2014 թվականին 144 մլն 375 հազար դրամով «ՕՎՍԱՍ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը (ընկերության անվամբ գրանցված է ք. Երեւան, Մոսկովյան փողոցում գտնվող 207.9 քմ տարածքը. գրանցվել է դստեր սեփականության իրավունքը):

Գիտակցելով, որ նվազ օրինական եկամուտների առկայության պայմաններում իր եւ կնոջ անվամբ հաշվառված են օրինական եկամուտները շեշտակիորեն գերազանցող արժեք ունեցող գույքեր (ինչը կարող է իրավասու մարմինների ուսումնասիրության առիթ եւ առարկա դառնալ), դրանց իրական բնույթը, ծագման աղբյուրը քողարկելու նպատակով Ա.Հ.-ն 2014 թվականին ձեռնամուխ է եղել հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքերի նկատմամբ իրավունքները եւ դրանց իրական պատկանելությունը թաքցնելուն՝ դրանք նվիրատվության ու առուվաճառքի ձեւական պայմանագրերով օտարելով մտերիմներին:

Այսպիսով, նախաքննությամբ ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է, որ Ա.Հ.-ն լվացել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ 351 մլն 497 հազար 422 դրամը եւ 75 մլն դրամ արժեքով անշարժ գույքը:

Բացի այդ, Ա.Հ.-ն, ով փաստացի կատարել է ՀՀ ոստիկանության նախկին պետ Վ.Գ.-ի անվտանգության ծառայության ղեկավարի գործառույթները, 2013-2014 թվականներին ՀՀ ոստիկանության պետ Վ.Գ.-ի հետ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ լվացել է վերջինիս կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներով գնված գույքը՝ թաքցնելով եւ խեղաթյուրելով գույքի ծագման աղբյուրը, իրավունքներն ու պատկանելիությունը:

Մասնավորապես, Վ.Գ.-ն, 1982-2018 թվականների ընթացքում զբաղեցնելով Ներքին գործերի նախարարության Սեւանի, Արմավիրի բաժինների պետի, ներքին գործերի նախարարի տեղակալի, ՊՆ Ռազմական ոստիկանության պետի, պաշտպանության նախարարի տեղակալի, ապա՝ Ոստիկանության պետի պաշտոնները, 2008-2018 թվականներ իրենթացքում տիրապետել, օգտագործել, տնօրինել է 2000-2018 թվականների ընթացքում իր կատարած հանցանքների արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գումար: ՀՀ ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցնող Վ.Գ.-ն (Վլադիմիր Գասպարյան), հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձ, իր անվամբ թանկարժեք գույք հայտարարագրելու դեպքում իրավապահ մարմինների ուշադրություն կենտրոնում հայտնվելուց եւ հնարավոր պատասխանատվությունից զերծ մնալու նպատակով հանցավոր ճանապարհով ստացված գույքի մի մասի ծագումը թաքցնելու հարցում աջակցելու համար 2013 թվականին դիմել է իր անվտանգության ծառայության ղեկավարի գործառույթները փաստացի կատարող Ա.Հ.-ին՝ հանձնարարելով «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությունից ձեռք բերել տրանսպորտային միջոցներ եւ դրանք հաշվառել իր անվամբ:

Նշված հանձնարարության հիման վրա՝ 2013 թվականի սեպտեմբերի 1-ին Ա.Հ.-ն Վ.Գ.-ի կողմից հատկացված 71 մլն 556 հազար դրամով «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությունից ձեռք է բերել Mercedes-Benz G 500 մակնիշի ավտոմեքենա, իսկ 2014 թվականի հունվարի 10-ին Վ.Գ.-ի կողմից հատկացված 80 մլն 200 հազար դրամով նույն ընկերությունից ձեռք է բերել Mercedes-Benz S 500L մակնիշի ավտոմեքենա՝ դրանք հաշվառելով իր անվամբ:

Այսպիսով, նախաքննությամբ ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է, որ Ա.Հ.-ն Ոստիկանության նախկին պետ Վ.Գ.-ի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում թաքցրել եւ խեղաթյուրել է վերջինիս հանցավոր գործունեության արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով՝ 151 մլն 756 հազար դրամ ընդհանուր արժողության գույքը՝ լվանալով հանցավոր ճանապարհով ստացված այդ գույքը:

Բացի այդ, Ա.Հ.-ն, 2017 թվականի հուլիսի 1-ից ունենալով գույքի եւ եկամուտների տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, 2018 թվականի մարտի 22-ին ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացված տարեկան հայտարարագրում դիտավորությամբ թաքցրել եւ դրանում չի ներառել 2017 թվականի օգոստոսի 23-ին բանկերից մեկի կողմից իրեն տրամադրված 100 հազար ԱՄՆ դոլար վարկի գումարը, որը հանգեցրել է նշված առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը:

Վերոգրյալի հիման վրա՝ հսկող դատախազի որոշմամբ՝ Ա.Հ.-ի նկատմամբ հարուցվել է նոր քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ, փողերի լվացում) եւ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով (հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը): Վարույթն իրականացնող քննիչը, մինչդատական վարույթում հավաքված ապացույցների գնահատման արդյունքում գալով այն հետեւության, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է, հայտնել է նախաքննության ավարտ: Հիշեցնենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից բերված վճռաբեկ բողոքը բավարարվել էր, Ա.Հ.-ի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցի (միջոցների) կիրառումը ճանաչվել է անբավարար, ինչի արդյունքում Ա.Հ.-ն կալանավորվել է (շարունակում է գտնվել կալանքի տակ):

ԸՆԴԴԵՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԳՈՐԾԸ ՀԱՍԱՎ ԴԱՏԱՐԱՆ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական՝30-րդ եւ 31-րդ հայցադիմումները:

Մեկ հայցադիմումով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանց» ծրագրի «Տրանշ 1» եւ «Տրանշ 2» հատվածների կապալառու իսպանական «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության հայաստանյան մասնաճյուղի ենթակապալառու «Պոլի-Տրանսպորտ» ՍՊ ընկերության բաժնետեր Գ.Վ.-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության որպես ապօրինի ծագում ունեցող գույք բռնագանձել՝

- Երեւան քաղաքի Աջափնյակ համայնքի Վահագնի թաղամասի Ն. Շնորհալի փողոցում գտնվող բնակելի տունը, 2 տրանսպորտային միջոց, 3 իրավաբանական անձանցում մասնակցություն, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է ավելի քան 163 միլիոն դրամ.
- 33 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի եւ օրինական եկամուտներով չհիմնավորվող, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամի հանրագումար:

Մյուս հայցադիմումով ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին ՀՀ տարածքային կառավարման նախկին նախարար, ԱԺ նախկին նախագահ, նախկին ՀՀ վարչապետ Հ.Ա.-ից, նրա կնոջից՝ Ջ.Ա.-ից, որդուց, դստերից, իրեն փոխկապակցված այլ անձանցից (աշխատակիցներ, ազգականներ եւ նրանց ամուսիններ) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 59 անշարժ գույք, որից 15-ը՝ Երեւան քաղաքում, մեծամասամբ՝ Կենտրոն վարչական շրջանում, 12-ը Արարատի մարզի Մխչյան համայնքում, 10-ը՝ Նարեկ համայնքում, 2-ը՝ Կոտայքի մարզ, Արզական համայնքում, 6-ը՝ Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքում, 1-ը՝ Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնքում, 1-ը՝Գեղարքունիքի մարզ, Սեւան համայնքում, 6-ը՝ Տավուշի մարզ, Դիլիջան համայնքում, 3-ը Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնքում, 1-ը՝ Արարատի մարզ, Մարմարաշեն համայնքում, 1-ը Արարատի մարզ, Այնթապ համայնքում, 1-ը՝ Արարատի մարզ, Արեւաբույր համայնքում.
- 4 ավտոմեքենա.
- 20 ընկերությունների մասնակցություններ եւ բաժնետոմսեր.
- շուկայականից էականորեն ցածր արժեքով օտարված 9 գույքերի շուկայական արժեքներ՝ ընդհանուր՝ 1 մլրդ 628 մլն 277 հազար 90 դրամ.
- ընկերություններին տրված փոխառություններից ծագող պահանջի իրավունք՝ 11 մլն 292 հազար 570 ԱՄՆ դոլարի, 687 մլն 500 դրամի եւ 3 մլն 117 հազար 680 եվրոյի չափով.
- 21 մլրդ 202 մլն 67 հազար 797 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի եւ օրինական եկամուտներով չհիմնավորվող, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված կամ չնույնականացված դրամի հանրագումար:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ ԿԱՆՑԿԱՑՎԻ

Երեւանում կայանալիք «Կանանց դերը ժողովրդավարության, խաղաղության եւ անվտանգության խթանման գործում» խորագրով միջազգային գագաթնաժողովի կազմակերպման աշխատանքները համակարգելու նպատակով վարչապետի հրամանով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով:

Միջգերատեսչական հանձնաժողովը ղեկավարում է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը: Անդամներն են ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի

նախարար Ժաննա Անդրեասյանը եւ այլք:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ գագաթնաժողովը կանցկացվի հոկտեմբերին, իսկ հանձնաժողովը պետք է ամեն ամիս հաշվետվություն ներկայացնի:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՋՐԿՎԵԼ ԵՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Արցախի բոլոր բուժհաստատություններում պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով մոտ 880 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման հնարավորությունից:

Մինչ այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել 182 հիվանդ համապատասխան բուժում ստանալու համար: Ընդ որում՝ հնարավոր չէ հիվանդներին տեղափոխել պառկած վիճակում, քանի որ ադրբեջանական կողմը խոչընդոտում է Արցախի ռեանիմոբիլի շարժը, իսկ Կարմիր խաչը չունի ռեանիմոբիլ եւ սովորական մեքենաներով է իրականացնում հիվանդների տեղափոխությունը. հիվանդները տեղափոխվում են նստած վիճակում:

755 տնտեսվարող սուբյեկտ (ընդհանուրի 17,7%-ը) շրջափակման պայմաններում աշխատելու անհնարինության պատճառով կասեցրել է իր գործունեությունը, իսկ մնացած տնտեսվարողները գործում են մասնակի ծավալով կամ պետական աջակցությամբ:

Ստեղծված տնտեսական բարդ իրավիճակի պատճառով նախնականորեն առնվազն 8,300 մարդ կորցրել է աշխատանքը եւ եկամտի աղբյուրը:

Ավելի քան 38,400 տոննա կենսական նշանակության ապրանքներ կմատակարարվեին Արցախ, եթե չլիներ շրջափակումը, որի ընթացքում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից մատակարարվել է դրա միայն չնչին մասը՝ շուրջ 3,370 տոննա ապրանք՝ գերակշիռ մասը՝ սնունդ ու դեղորայք:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Պարզվել են օրեր առաջ Ջրվեժ համայնքում գործող խանութ սրահի դիմաց տեղի ունեցած սպանության դեպքի մի շարք էական հանգամանքեր, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործություն կատարած անձանցից մեկի ինքնությունը: Վերջինս Երեւան քաղաքի 34-ամյա բնակիչ է:



2023թ. մարտի 2-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնից ՀՀ ՔԿ Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023թ. մարտի 1-ին՝ ժամը 23:20-ին, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն հրազենային վնասվածքով բուժօգնության է տեղափոխվել Ջրվեժ համայնքի 49-ամյա մի բնակիչ: Վերջինս, գիտակցության չգալով, ավելի ուշ մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով, 335-րդ հոդվածի 1-ին մասով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Կատարվել է դեպքի վայրի զննություն. զննության են ենթարկվել Ջրվեժ համայնքում գործող խանութ սրահի տեսանկարահանող սարքերի տեսագրությունները, խանութի դիմաց կայանված GAZ մակնիշի ավտոմեքենայի աջ եւ ձախ կողային հատվածներում հայտնաբերվել են արնանման հետքեր:

Նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն: Հարցաքննվել են դեպքին ականատես մի շարք անձինք:

Քրեական վարույթի շրջանակներում կատարված քննությամբ պարզվել է, որ մարտի 1-ին՝ ժամը 21:20-ի սահմաններում, 34-ամյա տղամարդը ինքնությունները չպարզված անձանց հետ միասին հիշյալ խանութ սրահի դիմաց վիճաբանության մեջ է մտել Ջրվեժ համայնքի 49-ամյա բնակչի, վերջինիս որդու եւ մի քանի այլ անձանց հետ տաղավարի հողատարածքի ձեւափոխման հարցի շուրջ:

Այդ ընթացքում վերոնշյալ անձինք սկսել են ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցնել միմյանց, որի ժամանակ Ջրվեժ համայնքի 49-ամյա բնակիչը վայր է ընկել, իսկ 34-ամյա տղամարդը քննությամբ դեռեւս չպարզված հանգամանքներում ձեռք բերած եւ իր մոտ պահվող հրազենից կյանքից զրկելու դիտավորությամբ կրակոց է արձակել Ջրվեժ համայնքի 49-ամյա բնակչի գլխի ուղղությամբ՝ պատճառելով մարմնական վնասվածք: Իր հետ դեպքի վայր եկած անձանց հետ նա դիմել է փախուստի:

Հսկող դատախազի կողմից Երեւան քաղաքի 34-ամյա բնակչի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու համար:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից հանձնարարություն է տրվել ոստիկանությանը նշված անձին վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու վերաբերյալ:

Քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ քրեական հետապնդման ենթարկվող անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին, ինչը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են քննչական եւ ապացուցողական միջոցներ դեպքի բոլոր հանգամանքները, ինչպես նաեւ միջադեպին մասնակից մյուս անձանց ինքնությունները պարզելու, վերջիններիս հայտնաբերելու ուղղությամբ: Այդ նպատակով հետաքննության մարմնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն:

ՊԱՀԱՆՋ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

Կաթոլիկության խորհրդարանը հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ պահանջում է Ադրբեջանից դադարեցնել ռազմական գործողությունները ԼՂ-ում եւ Հայաստանի հետ սահմանին, վերադառնալ հրադադարով հաստատված ստատուս քվոյին:

Հայտարարությունում, մասնավորապես, ասվում է. «Խորհրդարանն իր մտահոգությունն է հայտնում ՀՀ-ի սահմանները Ադրբեջանի կողմից շարունակական խախտման կապակցությամբ, նրա ապակայունացնող գործողությունների համար:

Կոչ է անում վերականգնել խաղաղ բանակցությունները Հարավային Կովկասում երկարաժամկետ խաղաղության հասնելու համար:

Պահանջում է, որ Ադրբեջանի Հանրապետությունը դադարեցնի ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում ու շփման սահմանին, ու հատկապես պետք է զերծ մնա Հայաստանի Հանրապետության սահմանները խախտելուց եւ վերադառնա հրադադարով հաստատված ստատուս քվոյին, որը արտացոլված է 2020 թվականի եռակողմ հայտարարությամբ: Միաժամանակ կոչ է անում կողմերին ձեռնարկել ամեն ինչ՝ նրանց տրամադրության տակ գտնվող դիվանագիտական գործիքներով վերականգնելու խաղաղությունը:

Խորհրդարանը Եվրամիությունից պահանջում է իր լծակները օգտագործել՝ նախ՝ 2020 թվականի հրադադարի համաձայնագրին վերադառնալու, իսկ հետո՝ արդար եւ երկարատեւ խաղաղությանը հասնելու համար:

Նաեւ պահանջում է անհապաղ դադարեցնել Ադրբեջանին զենքի բոլոր վաճառքները:

Կոչ է անում անհապաղ ազատ արձակել ռազմագերիներին, որոնք դեռ գտնվում են Ադրբեջանում գերության մեջ:

Կարեւորում է Ադրբեջանի իշխանությունների կողմից 2020 թվականի պատերազմից հետո հրադադարի համաձայնագրի կատարումը, եւ որ այդ գերիները միեւնույն ժամանակ ստանան արդար վերաբերմունք՝ միջազգային մարդասիրական իրավունքին համապատասխան»:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«Յունիբանկ» ԲԲԸ

Աճուրդի հայտարարություն

2023թ-ի ապրիլի 03-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 55 լոտ՝ ոսկյա ջարդոն 4,2 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 58.100 ՀՀ դրամ: Թիվ 49 լոտ՝ ոսկյա զարդեր 12,7 ընդհանուր քաշով (զուտ քաշը 12,2 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 168.900 ՀՀ դրամ: Թիվ 45 լոտ՝ ոսկյա ջարդոն 9,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 124.600 ՀՀ դրամ: Թիվ 43 ոսկյա ջարդոն 7 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 96.900 ՀՀ դրամ: Թիվ 10 լոտ՝ ոսկյա ջարդոն 30,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 30 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 415.400 ՀՀ դրամ: Թիվ 27 լոտ՝ ոսկյա ջարդոն 8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 107.700 ՀՀ դրամ: Թիվ 28 լոտ՝ոսկյա ջարդոն 6 գր. քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 132.400 ՀՀ դրամ: Թիվ 31 լոտ՝ ոսկյա զարդեր 124,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 120 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.619.000 ՀՀ դրամ: Թիվ 32 լոտ՝ ոսկյա զարդեր 74,3 գր. ընդհանուր քաշով, որից 50,7գր. ընդհանուր աշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 49 գր.) 585 հարգի՝661.000 ՀՀ դրամ, 23,6 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 22,8 գր.) 500 հարգի՝260.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 921.000 ՀՀ դրամ: Թիվ 34 լոտ՝ ոսկյա ջարդոն եւ զարդեր 19 գր. նդհանուր քաշով, որից 10,6գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 10 գր.) 500 հարգի՝113.700 ՀՀ դրամ, 8,4 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 8 գր.) 585

հարգի՝107.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 220.700 ՀՀ դրամ: Թիվ 35 լոտ՝ոսկյա զարդեր 15,5 գր. ընդհանուր քաշով, որից 4,6գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 4,4 գր.) 500 հարգի՝50.000 ՀՀ դրամ, 10,9 գր. քաշով ոսկյա զարդը 585 հարգի՝147.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 197.000 ՀՀ դրամ:

Թիվ 36 լոտ՝ ոսկյա զաղեր 38,4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 37,5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 505.000 ՀՀ դրամ: Թիվ 38 լոտ՝ոսկյա ջարդոն 28,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 28 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 377.000 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով:

Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ

Կառավարությունը հաստատեց օրենսդրական նախագծերի փաթեթ, որով ներդրվում է ոստիկանության ծառայողների ատեստավորման նոր համակարգ, որի միջոցով կբարձրանան ոստիկանության ծառայողների սոցիալական երաշխիքները, կտրամադրվի հավելավճար:

Այս մասին հայտնում են Ներքին գործերի նախարարությունից:

Ատեստավորման գործընթացը նախատեսվում է իրականացնել հետեւյալ հայեցակարգային մոտեցումների հիման վրա. ծառայողը համարվում է ատեստացիան անցած այն պարագայում, երբ, նախ, հաջողությամբ հաղթահարել է ընդհանուր զարգացվածության թեստը, այնուհետեւ՝ կրակային եւ ֆիզիկական պատրաստականության վարժությունները, ապա, մասնակցելով բուն մասնագիտական գիտելիքների ստուգման թեստին, նախատեսված 50 հարցերից 30-ին կամ 60 տոկոսին տվել է ճիշտ պատասխան:

Ոստիկանության գլխավոր խմբի ծառայողները, բացի նշված փուլերից, անցնելու են նաեւ հարցազրույց ղեկավարման հմտությունները լրացուցիչ ստուգելու նպատակով:

Մասնագիտական գիտելիքների պարզմանն ուղղված հարցաշարը բաղկացած է լինելու Ոստիկանության գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով նախատեսված ընդհանուր եւ մասնագիտական հարցերից՝ ըստ ծառայության ուղղվածության:

Եռամյա ժամկետի ընթացքում ատեստավորման չդիմելու կամ ատեստացիայի անցողիկ շեմը չհաղթահարելու դեպքում ծառայողները, զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով, ենթակա են Ոստիկանությունում ծառայությունից ազատման:

Առաջին ատեստավորումը չհաղթահարելու դեպքում ծառայողին մեկ անգամ տրվելու է վերապատրաստվելու հնարավորություն:

Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունքը պահպանվում է 3 տարի՝ բացառությամբ պաշտոնեական առաջխաղացմամբ (օրինակ՝ օպերլիազորից՝ բաժանմունքի պետ), ինչպես նաեւ ծառայության բնույթի փոփոխությամբ պայմանավորված նոր պաշտոնի նշանակման (օրինակ՝ պարեկից օպերլիազոր), որի դեպքում ծառայողը ենթակա է վերապատրաստման եւ ատեստավորման: Ընդ որում՝ ատեստավորվելու օրվանից 2 տարին լրանալուց հետո ծառայողը կրկին ձեռք է բերում ատեստավորվելու համար դիմելու իրավունք:

Ատեստավորում չեն անցնելու բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողները (Ոստիկանության պետ եւ տեղակալներ), ինչպես նաեւ Ներքին գործերի նախարարության տիրույթ տեղափոխվող ստորաբաժանումների աշխատակիցները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁԸ

Հանրակրթության նոր չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ Տավուշի մարզի Թեղուտի միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել հանդիպում, որին մասնակցել են հանրապետության մենթոր-ավագ դպրոցների եւ Տավուշի մարզի ուսումնական հաստատությունների տնօրենները եւ տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ եւ ուսուցիչներ:

Հանդիպման նպատակն էր քննարկել չափորոշիչների ներդրման փորձը, առարկայական նոր չափորոշիչներով եւ ծրագրերով աշխատելու առանձնահատկությունները, ինչպես նաեւ սովորողների կարողունակությունների զարգացմանը նպաստող ուսումնական միջավայրի եւ նյութատեխնիկական բազայի ապահովմանը վերաբերող մի շարք հարցեր:

Տավուշի մարզի ուսհաստատությունների տնօրենները ներկայացրել են նոր չափորոշչի փորձարկման նախնական փուլում իրենց մտավախությունները եւ գործընթացով պայմանավորված որոշ դժվարություններ:

Նրանց խոսքով՝ Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնի իրականացրած վերապատրաստումները, մշտադիտարկումները, ուսումնական եւ մեթոդական աջակցությունն ու խորհրդատվությունը, ինչպես նաեւ իրենց գործադրած ջանքերն օգնել են հաղթահարել հիմնական խնդիրները: Այդ համատեքստում հատկապես կարեւորվել են ԿԶՆԱԿ-ի մշակած նյութերի եւ գործիքների կիրառությունն ու հասանելիությունը:

Թեղուտի միջնակարգ դպրոցի տնօրեն Արգամ Թամրազյանը խոսել է նախագծային աշխատանքների մասին՝ օրինակ բերելով դպրոցամերձ տարածքում գործող ջերմոցը: Նա նաեւ նշել է, որ դպրոցի սովորողներն ակտիվ միջառարկայական նախագծերի են մասնակցում, որոնցում արտացոլվում են համայնքի խնդիրները, դիտարկվում՝ օրինաչափությունները, կատարվում՝ հետազոտություններ եւ համեմատություններ:

Նոյեմբերյանի ավագ դպրոցի տնօրեն Սուսաննա Բուդաղյանը ներկայացրել է ուսումնական պլանի կազմման գործնական հմտությունները, առարկայացանկի ձեւավորման եւ ժամաքանակների բաշխման սկզբունքները: Լճկաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն Մխիթար Առաքելյանը եւ նույն դպրոցի ուսուցիչ Լուսինե Բեջանյանը նշել են, որ չափորոշիչների փորձարկման սկզբնական շրջանում գնահատման նոր մոդելը որոշ մտահոգությունների տեղիք է տվել, հատկապես՝ անբավարար գնահատականի բացակայության առումով, սակայն հետագայում համոզվել են, որ այն շատ կարեւոր եւ անհրաժեշտ դրական փոփոխություն է: Սեւքարի միջնակարգ դպրոցի տնօրեն Նաիրա Թանանյանը ներկայացրել է ներդպրոցական վերահսկողության կարեւորությունը եւ դրա նշանակությունը չափորոշչի ներդրման գործընթացում: ԿԶՆԱԿ-ի տնօրենի տեղակալ Ինգա Վարդանյանը խոսել է չափորոշիչների փորձարկման ընթացքում ի հայտ եկած դժվարությունների, դրանց հաղթահարման եւ ծրագրերի լրամշակման մասին: Անդրադարձ է եղել մեթոդական նյութերի ստեղծման եւ դպրոցներին ցուցաբերված աջակցության աշխատանքներին: Հանդիպման ավարտին ԿԶՆԱԿ-ի տնօրենի տեղակալը պատասխանել է ներկաներին հուզող մի շարք հարցերի:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների պահպանման կենտրոնում պահպանման սարքավորումների տեղադրման ծրագրի նպատակով Հայաստանում Ճապոնիայի դեսպանության եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) միջեւ դրամաշնորհային ծրագրի պայմանագիր ստորագրվեց:

Ծրագրի իրականացման նպատակով կտրամադրվի ավելի քան 90 հազար դոլար: ՀԲԸՄ նախագահ Վազգեն Յակուբյանի խոսքով՝ սարքավորումների տրամադրումը կնպաստի հայկական ժառանգության եւ մշակույթի տարածմանը օտարերկրացիների եւ տեղացիների շրջանում:

«Ինչպես գիտեք, ՀԲԸՄ-ի հիմնական առաքելություններից մեկը մեր ազգի ժառանգությունը պահպանելն ու տարածելն է: ՀԲԸՄ այս աշխատանքի մեջ է 117 տարի, եկեղեցին այս նույն աշխատանքը անում է 1000-ամյակներ, եւ եկեղեցու արած աշխատանքն անգնահատելի է մեր ազգի համար: Կարեւոր է, որ այս նոր կենտրոնը, որը պետք է լրացվի նոր սարքավորումներով, եւ՛ օտարերկրացիների, եւ՛ մեր հայրենակիցների համար անհրաժեշտություն է: Ճապոնիայի կառավարությունը՝ ի դեմս Հայաստանում Ճապոնիայի դեսպանության, ցուցաբերում է քաղաքակրթության ամենաբարձր դրսեւորում: ՀԲԸՄ-ն ուրախ, հպարտ եւ երախտապարտ է, որ ծրագրի մաս է»,- ասաց ՀԲԸՄ նախագահ Վազգեն Յակուբյանը:

Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորին նշեց, որ իր համար մեծ պատիվ է մասնակցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների պահպանման կենտրոնում պահպանման սարքավորումների տեղադրման ծրագրի ստորագրման արարողությանը:

«Ծրագրի շրջանակներում Ճապոնիայի դրամաշնորհային աջակցությունը ծառայելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների մշակութային ժառանգության պահպանման անհրաժեշտ գործիքների եւ սարքավորումների տրամադրմանը: Ծրագրի շնորհիվ այցելուները հնարավորություն են ունենալու ծանոթանալ ավելի շատ մշակութային գործերի, ինչպես նաեւ այն ավելացնելու է թանգարան այցելած մարդկանց թիվը ինչպես Հայաստանից, այնպես էլ ամբողջ աշխարհից»,- նշեց դեսպանը՝ ընդգծելով, որ եւ՛ Ճապոնիան, եւ՛ Հայաստանը ունեն հարուստ եւ հնագույն մշակույթ: Դեսպանի համոզմամբ՝ այս քայլը նպաստում է երկու երկրների միջեւ բարեկամության ամրապնդմանը:

Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանն էլ նշեց, որ, ճիշտ է, Հայաստանն ու Ճապոնիան իրարից հեռու են, սակայն երկու երկրներին միավորող կարեւոր օղակ կա. վերաբերմունք ազգային ինքնության եւ մշակույթի նկատմամբ: Նախագիծը կնպաստի նաեւ փորձագետների վերապատրաստմանը, ինչպես նաեւ մշակույթի եւ ավանդույթների ոլորտում կրթական փորձի խթանմանը:

«ԷՐՄԻՏԱԺ»-Ի ԱՆԿՅՈՒՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՍՏՈՐԱԳՐԻ

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը համագործակցության նոր պայմանագիր կստորագրի Էրմիտաժի հետ: Մամուլի ասուլիսում «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Միխայել Բաղալյանը նշեց, որ պայմանագրի տեքստն ամբողջությամբ պատրաստ է:



«Հիմա իրավաբաններն են նայում, որ պայմանագիրը բերեն վերջնական տեսքի, բայց ընդհանուր համագործակցության բովանդակությունը, ուղղությունները հստակ են: Այս պայմանագրով նախատեսվում է ակտիվացնել փոխադարձ համագործակցությունը: «Էրեբունի» թանգարանում ստեղծվելու է «Էրմիտաժ»-ի անկյուն, ինչը շատ կարեւոր է: Մենք կունենանք ցուցադրություն «Էրմիտաժ»-ից: Այն հետաքրքիր կլինի մեր այցելուների համար, որոնց թվում քիչ չեն ռուս զբոսաշրջիկներ»,-ասաց Միքայել Բաղալյանը: Դրան զուգահեռ, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանից իրեր կցուցադրվեն «Էրմիտաժ»-ում: «Էրմիտաժ»-ը նաեւ «Էրեբունի» թանգարանին աջակցելու է գրականության տրամադրման հարցում, ինչպես նաեւ օգնելու է վերականգնողների վերապատրաստման գործում: Այս տարի մայիսի 3-ից Կարմիր բլուր հնավայրում սկսվող հնագիտական պեղումներին հայ արշավախմբին կմիանան նաեւ «Էրմիտաժ»-ի գործընկերները:

Միջազգային համագործակցությունն այսքանով չի սահմանափակվում: Մայիսին Բրիտանական թանգարանում բացվելու է ցուցադրություն, որտեղ ներկայացվելու են աքեմենյանից մինչեւ հելլենիստական ժամանակաշրջանի իրեր: Հայաստանի պատմության թանգարանն ու «Էրեբունի» թանգարանը կներկայանան իրենց ցուցանմուշներով: Նախատեսված է նաեւ հանդիպում Բրիտանական թանգարանի տնօրենի հետ:

ԼՈՒՐԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի նորանշանակ ուկրաինացի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը փորձել է ազգային թիմ վերադարձնել Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանին, սակայն մերժում է ստացել:

«Հենրիխ Մխիթարյանի հետ առաջին օրից փորձել եմ կապ հաստատել եւ անձամբ զրուցել նրա հետ: Սկզբում չստացվեց: Փորձեցի դիմել «Շախտյորում» նրա թիմակիցների օգնությանը, որպեսզի նրան տեղեկացնեն իմ ցանկության մասին, բայց նա հրաժարվել է ինձ հետ խոսել: Որոշ ժամանակ անց դիմեցի իմ օգնական Բերեզովսկուն, որը եղել է Մխիթարյանի թիմակիցը, բայց Հենրիխ Մխիթարյանը Բերեզովսկուն ասել է, որ արդեն ընդունել է իր որոշումը եւ չի ցանկանում այն վերանայել: Նա հրաժարվել է ինձ հետ հանդիպել: Ես նույնիսկ պատրաստ եմ եղել մեկնել Միլան նրա հետ անձամբ զրուցելու համար, բայց Մխիթարյանը չի ցանկացել հանդիպում: Նա հայտարարել է, որ վերջնական է իր որոշումը, եւ ինքն ավարտել է իր ելույթները ազգային հավաքականում:

Որպես հավաքականի գլխավոր մարզիչ՝ ես իմ կողմից ամեն ինչ արեցի նրա հետ խոսելու համար, բայց չստացվեց: Կարծում եմ, որ պետք է հարգենք նրա որոշումը: Նա բացառիկ ֆուտբոլիստ է Հայաստանի հավաքականի համար: Անձամբ չեմ ճանաչում, բայց, շատերի կարծիքով, նաեւ բացառիկ անձնավորություն է եւ լավ մարդ»,- ասաց Ալեքսանդր Պետրակովը:

Հայաստանի հավաքականը կսկսի պատրաստվել Թուրքիայի հավաքականի հետ առաջին հանդիպմանը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: Խաղը տեղի կունենա մարտի 25-ին Երեւանում:

ԲԻԼԼԻ ԱՅԼԻՇԻ ՆՈՐ ԴԵՐԸ

Բիլլի Այլիշն իրեն փորձել է որպես դերասանուհի նոր՝ «Ռոյ» սերիալում: Երգչուհին մարմնավորել է շոուի գլխավոր հերոսին՝ հիպնոթերապեւտին: Սերիալի պրեմիերան կկայանա մարտի 17-ին:

Այս ֆիլմը կատարողի դեբյուտն էր որպես դերասանուհի: Նախկինում Այլիշը չի մասնակցել կինոնախագծերի, այնուամենայնիվ, նա ունի «Սիմփսոնները» անիմացիոն սերիալի հատուկ դրվագում հնչյունավորման փորձ եւ «Օսկար»՝ «Լավագույն երգ» անվանակարգում՝ «Մահանալու ժամանակ չկա» ֆիլմի համար:

Սերիալի ստեղծողները կպատմեն Դրե անունով երիտասարդ աղջկա մասին, որին մարմնավորում է Դոմինիկ Ֆիշբեքը: Նա տարված է մի փոփ աստղով: Սա աղջկան տանում է անսպասելի հետեւանքների՝ դեպրեսիայի ու բռնության:

Նախագծի ռեժիսորն ու գործադիր պրոդյուսերը Դոնալդ Գլովերն է: Դերասանական կազմում ընդգրկված են Քլոե Բեյլին, Դամսոն Իդրիսը, Ռիկի Թոմփսոնը եւ Փերիս Ջեքսոնը:

● *Մարտի 18-ին Seven Visions Hotels, The Dvin-ում տեղի կունենա GENETIC CODE X VOSKAN KHACHBULAGHYAN & "BERT" ENSEMBLE համերգը: Տոմսերի արժեքը՝12000-25000դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Կնքել եմ վարկային պայմանագիր, որից բխող պարտավորությունների աղահովման համար գրավադրել եմ իմ գույքը: Վճարումները ժամանակին կամ ընդհանրապես չկատարելու դեպքում ի՞նչ հետեւանքներ կարող են առաջանալ:

Վարդուհի Մնացականյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ վարկի մարման եւ տոկոսների վճարման պարտականությունը չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում վարկը դասակարգվում է՝դառնալով ժամկետանց, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տույժեր: Պայմանագրում տույժերի վերաբերյալ դրույթներ նախատեսված չլինելու դեպքում տոկոսները հաշվարկվում են կետանցի (ուշացման) օրվանից մինչեւ պարտավորության դադարման օրը՝ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Եթե վարկային պայմանագրի շրջանակներում առկա է գրավադրված գույք, ապա ֆինանսական կազմակերպությունը կարող է իրացնել գրավի առարկան եւ իրացման արդյունքում ստացված գումարը ուղղել վարկային պարտավորությունների կատարմանը:

Եթե իրացման արդյունքում ավելացել է գումար, ապա ֆինանսական կազմակերպությունը պետք է վերադարձնի Ձեզ այդ գումարը, իսկ եթե ստացված գումարը բավարար չէ վարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելու համար, ապա Դուք պատասխանատու եք վարկային պայմանագրից բխող պարտավորությունների համար Ձեզ պատկանող մնացած գույքով:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ միայն գրավատուն հանձնված գույքի գրավի դեպքում է, որ գույքի իրացումից հետո գրավատունն իրավունք չունի որեւէ պահանջ ներկայացնել պարտապանի նկատմամբ, եթե անգամ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն անբավարար է պահանջը լրիվ բավարարելու համար:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների համար ինչպե՞ս է հաշվարկվում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը:

Գրիշա Սեդրակյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ երրորդ երկրներից Հայաստանի տարածք ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի եւ գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ անհատ ձեռնարկատեր եւ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի վարձակալության գործարքները ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի Հյուսիսային պողոտայում բացվեց Հայաստանի մայրաքաղաքում կայանալիք ծանրամարտի Եվրոպայի առաջնության մեկնարկի հետհաշվարկի ժամացույցը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.03.2023**
Հասցեն՝ Զեյթունի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: